ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և ապահովել սպառողների շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

2. Սույն օրենքը տարածվում է նաև օտարերկրյա պետություններում տնտեսավարող սուբյեկտների այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը Հայաստանի Հանրապետությունում:

3. Սույն օրենքը չի տարածվում անդրսահմանային շուկաներում մրցակցության միասնական կանոններով կարգավորվող այն հարաբերությունների վրա, որոնց նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի իրավասությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի: Ապրանքային շուկաներն անդրսահմանային դիտարկելու չափանիշները սահմանվում են Եվրասիական տնտեսական միության նորմատիվ իրավական ակտերով:

4. Հանձնաժողովը սույն օրենքով նախատեսված գործառույթները Կենտրոնական բանկի կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց նկատմամբ իրականացնում է Կենտրոնական բանկի հետ համագործակցության հիման վրա: Հանձնաժողովի և Կենտրոնական բանկի համագործակցությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) Կենտրոնական բանկի կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց առնչվող ոլորտներում տնտեսական մրցակցության վերաբերյալ խնդիրների մասին Հանձնաժողովը տեղեկացնում է Կենտրոնական բանկին։

2) Կենտրոնական բանկը գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների, համակենտրոնացումների վերաբերյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց առաջ դրանք ներկայացնում է Հանձնաժողով՝ կարծիքի։

3) Հանձնաժողովը ձեռնպահ է մնում տնտեսական մրցակցության վերաբերյալ բարձրացրած հարցի հետ կապված միջամտությունից, եթե Կենտրոնական բանկը Հանձնաժողովին հիմնավոր կերպով տեղեկացնում է, որ այդ հարցը, օրենքով սահմանված կարգավորման նպատակներից ելնելով, վերապահվում է Կենտրոնական բանկին, և Կենտրոնական բանկն իրականացնում է օրենքով սահմանված գործառույթներ: Այդ դեպքում վերջնական որոշումն ընդունում է Կենտրոնական բանկը՝ Հանձնաժողովի ներկայացրած դիրքորոշման հաշվառմամբ՝ անդրադառնալով Հանձնաժողովի բարձրացրած բոլոր հարցերին և իր վերջնական դիրքորոշման կամ որոշման մեջ նշելով դրանք ընդունելու կամ չընդունելու հիմնավորումները։

4) Հանձնաժողովը ձեռնպահ է մնում սույն մասի 2-րդ կետով նախատեսված կարծիքի ներկայացումից և սույն մասի 3-րդ կետով նախատեսված տնտեսական մրցակցության վերաբերյալ բարձրացրած հարցի հետ կապված որևէ միջամտությունից այն բացառիկ դեպքերում, երբ Կենտրոնական բանկը նպատակ ունի կանխել ֆինանսական կայունությանն ու գների կայունությանն սպառնացող հնարավոր վտանգը կամ արձագանքել դրան, ֆինանսական կազմակերպությունը ճանաչվում է անվճարունակ, կամ սնանկության դիմում է ներկայացվում դատարան, իրականացվում է ֆինանսական կազմակերպության կամ դրա մասնակցի բաժնեմասի կամ բաժնետոմսի հարկադիր օտարում, իրականացվում է ֆինանսական կազմակերպության վերակազմակերպում, հարկադիր վաճառք կամ լուծարում: Սույն կետով նախատեսված դեպքերում ընդունված որոշումները Կենտրոնական բանկը հանձնում է Հանձնաժողովին, բացառությամբ

որոշման այն հատվածների, որոնք պարունակում են բանկային գաղտնիք կամ այնպիսի տեղեկություն, որի տրամադրումն արգելված է օրենքով կամ կարող է թույլատրվել միայն դատական ակտի հիման վրա.

5) Հանձնաժողովի նախագահը և Կենտրոնական բանկի նախագահն ստորագրում են համատեղ հրաման, որով կարգավորվում են՝

ա. մրցակցության պաշտպանության խնդիրների հետ կապված համագործակցության ուղղություններն ու ընթացակարգերը.

բ. Հանձնաժողովի ու Կենտրոնական բանկի միջև տեղեկատվության, այդ թվում՝ տնտեսական մրցակցության խնդիրների առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակման դեպքերն ու կարգը.

գ. այն դեպքերը, երբ Հանձնաժողովն ու Կենտրոնական բանկը իրականացնում են իրենց իրավասությունները Կենտրոնական բանկի կողմից կարգավորվող կամ վերահսկվող անձանց նկատմամբ, և այդ դեպքերում Հանձնաժողովի դիրքորոշման ներկայացման ընթացակարգն ու փոխհամագործակցության մանրամասները.

դ. ոլորտում մրցակցության պաշտպանության վերաբերյալ սույն մասով նախատեսված, ինչպես նաև օրենքով չարգելված այլ հարցեր:

5. Սույն օրենքը չի տարածվում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտների այն հարաբերությունների վրա, որոնց կարգավորումն օրենքով վերապահված է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրավասությանը: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործող անձանց նկատմամբ տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության գործառույթները Հանձնաժողովն իրականացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համագործակցության սկզբունքի հիման վրա:

Հոդված 2. Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին օրենսդրությունը

1. Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին օրենսդրությունը կազմված է Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքից և այլ նորմատիվ իրավական ակտերից:

2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և սույն օրենքի նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են վավերացված միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները և տերմինները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ու տերմինները կիրառվում են հետևյալ իմաստով.

1) **տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն՝** տնտեսավարող սուբյեկտների մրցություն, որի պայմաններում նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն գործողություններով օբյեկտիվորեն բացառվում կամ սահմանափակվում է համապատասխան ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա միակողմանի ազդելու հնարավորությունը.

2) **ապրանք՝** քաղաքացիական իրավունքի օբյեկտ, այդ թվում՝ գույք, աշխատանք, ծառայություն (ներառյալ՝ ֆինանսական), որը նախատեսված է իրացման համար.

3) **փոխադարձ փոխարինելի ապրանքներ՝** ապրանքներ, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով.

4) **ապրանքային շուկա՝** որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով.

5) **ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման՝** տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջություն.

6) **ապրանքային շուկայի աշխարհագրական սահման՝** որոշակի աշխարհագրական տարածք (այդ թվում՝ ճանապարհ, օդային, ջրային, ցամաքային և այլ երթուղի), որի շրջանակում տնտեսապես հնարավոր կամ նպատակահարմար է ձեռք բերել, իրացնել կամ արտադրել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները, և առկա չէ այդ հնարավորությունը կամ նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը կարող է ներառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կամ դրա մի մասը կամ Հայաստանի Հանրապետության (կամ դրա մի մասի) և այլ պետության (կամ դրա մի մասի) տարածքը.

7) **ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատված՝** որոշակի ժամանակահատված (օր, ամիս, տարի), որի շրջանակում ուսումնասիրվում է ապրանքային շուկան։

8) **ապրանքային շուկայի սուբյեկտներ՝** տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներն իրացնողը, արտադրողը կամ ձեռք բերողը.

9) **իրացնող՝** ապրանք իրացնող կամ հնարավոր իրացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ պետական մարմին.

10) **ձեռք բերող՝** ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ պետական մարմին.

11) **սպառող՝** սպառման նպատակով ապրանք ձեռք բերող կամ հնարավոր ձեռք բերող ~~իրավաբանական կամ~~ ֆիզիկական անձ ~~կամ պետական մարմին~~.

11.1) **սպառողների շահերի պաշտպանություն՝** Հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումների ամբողջություն՝ կանխելու, խափանելու կամ վերացնելու այնպիսի վարքագիծը, գործողությունը կամ անգործությունը ներառյալ՝ դրանց հետևանքները, որը վնասում է կամ կարող է վնասել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերը-.

11.2) **գործարքի վերաբերյալ որոշում՝** սպառողի ցանկացած որոշում, որը վերաբերում է ապրանքի ձեռքբերմանը կամ հնարավոր ձեռքբերմանը, վճարման, պահպանման կամ տնօրինման պայմաններին կամ ապրանքի հետ կապված պայմանագրային իրավունքների իրացմանը, անկախ այն հանգամանքից՝ սպառողը ձեռք կբերի տվյալ ապրանքը, թե՝ ոչ.

12) **ապրանքային շուկայի ծավալ՝** ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացման կամ ձեռքբերման ընդհանուր ծավալը՝ բնեղեն և (կամ) արժեքային արտահայտությամբ.

13) **իրացում՝** օտարում (վաճառք, մատակարարում, այլ կերպ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում), մատուցում կամ կատարում.

14) **ձեռքբերում՝** գնում, ստացում կամ ընդունում.

15) **Հանձնաժողով՝** Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով.

16) **պետական մարմին՝** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, պետության կամ համայնքի հիմնարկ, Կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքի անունից հանդես եկող կամ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթ կամ լիազորություն իրականացնող իրավաբանական անձ կամ այլ կազմակերպություն, Հայաստանի

Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության համայնքի՝ 50 տոկոս և ավելի փայաբաժին ունեցող կազմակերպություն.

17) **տնտեսավարող սուբյեկտ՝** անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ կամ անձանց միություն, իսկ սույն օրենքով նախատեսված՝ համակենտրոնացման, անբարեխիղճ մրցակցության, սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների և տնտեսական գործունեության համակարգման դեպքերում տնտեսավարող սուբյեկտ է համարվում նաև ֆիզիկական անձը.

18) **տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձ՝** տնտեսավարող սուբյեկտի միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձ կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամ կամ կազմակերպչական, կարգադրական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձ.

19) **առևտրային օբյեկտ՝** գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է իրացման ոլորտում ապրանքներն սպառողին հասցնելու համար.

20) **առևտրային ցանց՝** երկու կամ ավելի առևտրային օբյեկտների համախումբ, որոնք ընդհանուր կառավարման ներքո են կամ գործում են միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

21) **տնտեսական պայմաններ (գործոններ)՝** ապրանքի ձեռքբերման, արտադրության, իրացման (ծառայության մատուցման, աշխատանքի կատարման) հետ կապված ծախսեր, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, գնաճ, գնանկում.

22) **գնի չհիմնավորված բարձրացում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված բարձրացում.

23) **գնի չհիմնավորված իջեցում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմաններով (գործոններով) չպայմանավորված իջեցում.

24) **գնի չհիմնավորված պահպանում՝** տնտեսավարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի պահպանումն այն դեպքում, երբ որոշակի տնտեսական պայմանների (գործոնների) առկայությունը կարող էր հանգեցնել կամ պետք է հանգեցներ ավելի ցածր կամ ավելի բարձր գնի սահմանման.

25) **խտրական պայմաններ՝** ապրանքային շուկա մուտք գործելու, արտադրության, փոխանակման, սպառման, իրացման կամ ապրանքի այլ կերպ փոխանցման պայմաններ, այդ թվում՝ ապրանքի գինը, որոնք տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համար

ստեղծում են անհավասար պայմաններ կամ անհավասար դրություն այլ տնտեսավարող սուբյեկտի կամ սպառողի համեմատությամբ.

26) **մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման հատկանիշներ՝** անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում տնտեսական պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների հետևանքով կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման հետևանքով ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում, այլ հանգամանքներ, որոնք տնտեսավարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանի ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը.

27) **ուղղակի վերահսկողություն՝** իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները կանխորոշելու հնարավորություն, որը դրսևորվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի գործառույթների իրականացման, իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու իրավունքի ձեռքբերման և (կամ) իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թվի 50 տոկոսից ավելին տիրապետելու միջոցով.

28) **անուղղակի վերահսկողություն՝** իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները կանխորոշելու հնարավորությունն այնպիսի իրավաբանական կամ ֆիզիկական անձի միջոցով, որն ունի ուղղակի վերահսկողություն տվյալ իրավաբանական անձի նկատմամբ.

29) **ակտիվի արժեք՝** ակտիվի հաշվեկշռային արժեք, իսկ դրա բացակայության դեպքում՝ ակտիվի փաստացի կամ գործարքային արժեք.

30) **հասույթ՝** համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տնտեսավարող սուբյեկտի սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն դրամական ներհոսք, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների

հետևանքով սեփական կապիտալի աճի: Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողների համար հասույթ է համարվում ապրանքների իրացումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտը՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում անուղղակի հարկերի գումարները.

31) **փայաբաժին՝** իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության իրավունք (բաժնեմաս, բաժնետոմս, այլ արժեթուղթ).

32) **պետական օժանդակություն տրամադրող մարմին՝** պետական մարմին, ինչպես նաև բոլոր այն մարմինները կամ կազմակերպությունները կամ պաշտոնատար անձինք, որոնք լիազորված են հանրային ֆինանսների կամ հանրային ռեսուրսների հաշվին տրամադրելու պետական օժանդակություն սույն օրենքի իմաստով կամ Կառավարության որոշմամբ տրամադրված պետական օժանդակությունների դեպքում՝ այն պետական մարմինը, որը Կառավարության քննարկմանն է ներկայացրել համապատասխան պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը.

33) **օր՝** օրենսդրությամբ սահմանված աշխատանքային օր.

34) **ակցիա՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով.

35) **զեղչ՝** կիրառվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված իմաստով.

36) **բազային տոկոսներ՝** Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի մեկուկեսի չափով վճարման ենթակա տոկոսներ

2. Սույն օրենքում օգտագործվող մյուս հասկացությունները և տերմինները կիրառվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստով:

Հոդված 4. Անձանց խումբը

1. Սույն օրենքի իմաստով՝ անձանց խումբն իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ է, որոնց միջև փաստացի առկա է փոխկապվածություն կամ վերահսկողություն, և որոնց նկատմամբ բավարարվում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

1) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպությունում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ

գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին.

2) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ կազմակերպություններում իր մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպությունների կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին.

3) կազմակերպությունները և ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, եթե նրանք փոխկապվածության կամ վերահսկողության ուժով գործում են ընդհանուր տնտեսական շահով պայմանավորված.

4) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն է ստանում կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ.

5) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն է ստանում կանխորոշելու այդ կազմակերպությունների կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպությունների կողմից իրենց հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ.

6) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձի առաջարկությամբ ընտրվել կամ նշանակվել է այդ կազմակերպության միանձնյա գործադիր մարմինը և (կամ) կոլեգիալ գործադիր մարմնի կազմի կեսից ավելին, և (կամ) ընտրվել է այդ կազմակերպության կառավարման մարմնի կազմի կեսից ավելին.

7) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձի առաջարկությամբ նշանակվել կամ ընտրվել են այդ կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինները և (կամ) կոլեգիալ գործադիր մարմինների կազմերի կեսից

ավելին, և (կամ) ընտրվել է այդ կազմակերպությունների կառավարման մարմինների կազմերի կեսից ավելին.

8) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձն առնվազն մեկ տարի իրականացնում է այդ կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի իրավասությունները.

9) կազմակերպությունները, եթե միևնույն ֆիզիկական կամ իրավաբանական անձն առնվազն մեկ տարի իրականացնում է կազմակերպությունների միանձնյա գործադիր մարմինների իրավասությունները.

10) կազմակերպությունները, որոնցում կոլեգիալ գործադիր մարմնի անդամների կեսից ավելին միևնույն ֆիզիկական անձինք են.

11) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնց կողմից շահագործվող առևտրային օբյեկտներն ընդհանուր կառավարման ներքո են կամ գործում են միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

12) ֆիզիկական անձը, նրա ամուսինը, ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը~~, եղբայրը կամ քույրը.~~

12.1) ֆիզիկական անձը, նրա եղբայրը կամ քույրը.

13) կազմակերպությունը և ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով կազմում են անձանց խումբ, եթե այդ անձինք կազմակերպությունում իրենց մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, լիազորագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության կամ այլ գործարքների միջոցով) այդ կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին.

14) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով անձանց խումբ է կազմում միևնույն անձի հետ, և այլ անձինք, որոնք սույն մասում նշված հիմքերից որևէ մեկով տվյալ անձանցից որևէ մեկի հետ անձանց խումբ են կազմում:

Հոդված 12. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը

1. Արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը:

2. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հիմնավորված չէ տնտեսական

պայմաններով կամ գործոններով և վնասում է կամ կարող է վնասել բանակցություններում թույլ դիրք ունեցող կողմի շահերը:

3. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահում է համարվում՝

1) ապրանքներ ձեռք բերելուց անհիմն հրաժարվելը.

2) խտրական պայմանների սահմանումը կամ կիրառումը.

3) ձեռնարկատիրական հարաբերությունների անհիմն դադարեցումը.

4) արտոնությունների տրամադրման, այդ թվում՝ զեղչերի կիրառման, հավելյալ ծառայությունների մատուցման պարտադրումը, որի դիմաց բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից որևէ գործողություն չի իրականացվում.

5) պայմանագրի կամ համագործակցության պայմանների միակողմանի և հաճախակի փոփոխությունն առանց պայմանագրի կողմի համաձայնության կամ գիտության.

6) առևտրային օբյեկտում իրացնողների ապրանքների ներկայացման և իրացման համար չհիմնավորված հավելյալ վճարների գանձումը.

7) բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտին պատկանող առևտրային օբյեկտներում մրցակից ապրանքների գների, ցուցադրման եղանակի, տեղի և իրացման համար էական նշանակություն ունեցող այլ պայմանների միջև արհեստական տարբերությունների սահմանումը կամ կիրառումը.

8) պայմանագրի կողմին պայմանների պարտադրումը, որոնք վերաբերում են՝

ա. այլ տնտեսավարող սուբյեկտի հետ պայմանագիր կնքելու արգելքին.

բ. այլ տնտեսավարող սուբյեկտի հետ կնքվող պայմանագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը.

գ. մատակարարված և բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի սեփականությունը համարվող ապրանքի փչացման, վնասվածքի, կորստի կամ ոչնչացման դեպքում տնտեսավարող սուբյեկտի կողմից վնասների փոխհատուցմանը, բացառությամբ այն դեպքի, երբ դա տեղի է ունեցել վերջինիս մեղքով.

դ. տնտեսավարող սուբյեկտի կողմից այն ծախսերի փոխհատուցմանը, որոնք կապված չեն ապրանքի մատակարարման պայմանագրի կատարման կամ ապրանքի հետագա իրացման հետ.

ե. այն ապրանքի վերադարձման պարտավորության սահմանմանը, որոնք չեն իրացվել որոշակի ժամանակահատվածի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների վերադարձման պահանջը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով.

զ. ապրանքները բանակցային ուժեղ դիրք ունեցող սուբյեկտի մատնանշած ապրանքային նշանով իրացնելուն.

է. իրացման ընթացքում ակցիաներ, այդ թվում՝ զեղչեր կիրառելու, արտոնություններ սահմանելու արգելքին.

9) առանց գրավոր պայմանագիր կնքելու կամ գործարքը հաստատող այլ գրավոր փաստաթղթի առկայության մատակարարում իրականացնելուն պարտադրելը.

10) բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից առևտրային հարաբերության մյուս կողմի համար վատթարացնող այլ պայմանների պարտադրանքը.

11) բանակցային ուժեղ դիրք ունեցող՝ գյուղատնտեսական արտադրանք ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարումների կատարման «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.14-րդ հոդվածով սահմանված ժամկետի կետանց թույլ տալը, բացառությամբ, եթե գյուղատնտեսական արտադրանք ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը թույլ է տվել վճարման համար սահմանված ժամկետին հաջորդող մինչև 30 օրացույցային օրվա կետանց՝ ամբողջությամբ կատարելով պարտավորությունը և կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկված բազային տոկոսները.

12) եթե բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտը մատակարարի նկատմամբ թույլ է տվել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.12-րդ հոդվածով սահմանված վճարումների կատարման 3 միլիոն կամ ավելի դրամի չափով 90 օրացուցային օր կամ ավելի ժամկետով կետանց.

13) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 4.4-րդ գլխով նախատեսված առևտրային ցանցերի և մատակարարների միջև արդար առևտրի կանոնների խախտում թույլ տալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման կամ անբարեխիղճ մրցակցության, ինչպես նաև կարող է վնասել սպառողների շահերը.

14) այլ գործողություն կամ վարքագիծ, որը պարունակում է սույն հոդվածի 2-րդ մասի հատկանիշները:

Գ Լ ՈՒ Խ 6
ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Հոդված 13. Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացման հասկացությունը

1. Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսավարող սուբյեկտների միացումը.

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված տնտեսավարող սուբյեկտների միաձուլումը.

3) տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի ակտիվների ձեռքբերումը, եթե դրանց արժեքն ինքնին կամ գործարքին նախորդող վերջին երեք տարվա ընթացքում տվյալ տնտեսավարող սուբյեկտից ձեռք բերված ակտիվների հետ միասին կազմում է համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահի դրությամբ ակտիվն իրացնող տնտեսավարող սուբյեկտի ակտիվների արժեքի 20 տոկոսը կամ ավելին.

4) տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը.

5) մտավոր սեփականության օբյեկտի, այդ թվում՝ անհատականացման միջոցի օգտագործման իրավունքի ձեռքբերումը, որի հետևանքով տնտեսավարող սուբյեկտը կարող է ազդեցություն ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում որևէ ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վրա.

6) տնտեսավարող սուբյեկտների ցանկացած գործարք, գործողություն, վերակազմակերպում կամ վարքագիծ, որի շնորհիվ տնտեսավարող սուբյեկտն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է ազդել այլ տնտեսավարող սուբյեկտի որոշումների կայացման կամ մրցունակության վրա կամ կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մեկ ուրիշի որոշումների կայացման կամ մրցունակության վրա կամ կարող է ազդեցություն ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում որևէ ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վրա.

7) մեկից ավելի տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետությունում այնպիսի իրավաբանական անձի հիմնադրումը, որը գործելու է որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ:

2. Միացման մասնակիցներ են համարվում միացման ձևով վերակազմակերպվող տնտեսավարող սուբյեկտները:

3. Միաձուլման մասնակիցներ են համարվում միաձուլվող տնտեսավարող սուբյեկտները:

4. Ակտիվների ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են ակտիվներ իրացնող և ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտները:

5. Փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժին ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը և այն տնտեսավարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են համարվում իրավահարաբերության մասնակից տնտեսավարող սուբյեկտները:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են համարվում հիմնադիր տնտեսավարող սուբյեկտները:

8. Սույն օրենքի իմաստով՝ համակենտրոնացումը կայացվում է՝

1) միևնույն ապրանքային շուկայում (հորիզոնական համակենտրոնացում).

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում (ուղղահայաց համակենտրոնացում).

3) տարբեր ապրանքային շուկաներում (խառը համակենտրոնացում):

9. Համակենտրոնացում չեն համարվում՝

1) տնտեսավարող սուբյեկտների՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված վերակազմակերպումները, գործողությունները կամ գործարքները, որոնք տեղի են ունենում սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 12-րդ կետերով նախատեսված հիմքերով անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև.

~~համաձայն անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերի, եթե պահպանվել են սույն օրենքի 14-րդ հոդվածի պայմանները.~~

2) ֆոնդային բորսաներում ցուցակված արժեթղթերի ձեռքբերման վերաբերյալ գործարքները՝ բացառությամբ արտաբորսայական գործարքների.

3) դատական ակտի հիման վրա իրականացվող աճուրդների միջոցով կնքված գործարքները.

4) ժառանգության ընդունումը:

~~**Հոդված 14. Անձանց խմբի ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների մասին տեղեկացնելու կարգը**~~

~~1. Անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտները սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նշված վերակազմակերպումները, գործողությունները կամ~~

գործարքները կատարելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, տեղեկացնում են Հանձնաժողովին։

2. Անձանց խումբը պարտավոր է պահպանել հետևյալ պայմանները.

1) անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը, նրանց՝ անձանց խումբ հանդիսանալու հիմնավորումները Հանձնաժողովի որոշմամբ հաստատված ձևով սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան վերակազմակերպումը, գործողությունը կամ գործարքը կատարելուց առնվազն մեկ ամիս առաջ ներկայացված լինի Հանձնաժողով.

2) անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան վերակազմակերպման, գործողության կամ գործարքի պահին փոփոխության ենթարկված չլինի այն ցուցակի համեմատ, որը ներկայացվել է Հանձնաժողով.

3) անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը հիմնված լինի հավաստի տեղեկությունների վրա և չպարունակի կեղծ տվյալներ։

3. Հանձնաժողովն անձանց խմբի ցուցակը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, դիմողին ներկայացնում է հետևյալ ծանուցումներից մեկը.

1) ցուցակը ստանալու և այն, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունների, Հանձնաժողովի պաշտոնական կայքում տեղադրելու վերաբերյալ.

2) Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ձևը կամ պայմանները չպահպանելու վերաբերյալ։

4. Անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը և հիմնավորումները Հանձնաժողով ներկայացնելու կարգը, ձևը և ժամկետները սահմանում է Հանձնաժողովը։

5. Անձանց խմբի ցուցակը Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ձևի կամ պայմանների խախտմամբ ներկայացվելու դեպքում անձանց խմբի ցուցակը համարվում է չներկայացված։

6. Հանձնաժողով ներկայացված անձանց խմբի ցուցակում ոչ հավաստի տվյալներ հայտնաբերվելու դեպքում այն ներկայացնողը ենթարկվում է պատասխանատվության, և ցուցակը հանվում է Հանձնաժողովի պաշտոնական կայքից։

Հոդված 21. Հասարակության մոլորեցումը

1. Անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

~~1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ սույն օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ.~~

~~2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման).~~

~~3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ.~~

~~4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:~~

~~2. Սույն հոդվածը չի տարածվում այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնց (որի) հետևանքով կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օգտագործված հասկացությունները կիրառվում են «Գովազդի մասին» օրենքի իմաստով:~~

ԳԼՈՒԽ 9.1
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Հոդված 26.1. Սպառողների շահերը խախտող գործելակերպը

1. Սպառողների շահերը խախտող գործելակերպ է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, որը ազդում է կամ կարող է ազդել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա և

հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, այլ նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին կամ խախտում է սպառողների նկատմամբ բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքները:

2. Սպառողների շահերը խախտող գործելակերպն արգելվում է:

3. Սպառողների շահերը խախտող գործելակերպ է համարվում սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, այդ թվում՝

1) «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված անարդար առևտրային գործելակերպը .

2) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդը .

3) սպառողների հետ կնքվող միանալու պայմանագրերին կամ պայմանագրի ընդհանուր պայմաններին ներկայացվող պահանջների խախտումը .

4) ապրանքի որակին, քանակին և այլ բնութագրերին ներկայացվող պահանջների խախտումը.

5) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված ապրանքի գնի ներկայացման կանոնների խախտումը:

4. Սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

5 . Սույն հոդվածը չի տարածվում այն վարքագծի, գործողության կամ անգործության վրա, որի հետևանքով կարող է վնաս հասցվել սպառողների կյանքին, առողջությանը, անվտանգությանը, հասարակական կամ պետական անվտանգությանը կամ շրջակա միջավայրին:

6 . Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում օգտագործված հասկացությունները կիրառվում են «Գովազդի մասին» օրենքի իմաստով:

Գ Լ ՈՒ Խ 1 0
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 27. Հանձնաժողովի կարգավիճակը և գործառույթները

1. Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որն ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը և իրականացնում է սպառողների շահերի պաշտպանությունը:

2. Հանձնաժողովը սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող կենտրոնական մարմինն է:

3" Հանձնաժողովը որպես սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող կենտրոնական մարմին՝

1) իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի հիման վրա համագործակցում է սպառողների շահերի պաշտպանության նպատակով գործող միջազգային կազմակերպությունների հետ.

2) իր իրավասության սահմաններում համագործակցում է օտարերկրյա պետությունների սպառողների շահերի պաշտպանություն իրականացնող մարմինների հետ, որի շրջանակում սահմանված կարգով իրավասու է ստանալու ու նրանց տրամադրելու տեղեկատվություն

3) համագործակցում է այլ իրավասու մարմինների հետ:

Հոդված 29. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի նախագահ կամ լիազորությունների հինգ տարի ~~ամբողջ~~ ժամկետով, Հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը՝

1) չի համապատասխանում սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործության համար.

5) օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

6) ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

4. Հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը:

5. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում թեկնածուն առաջադրվում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով տեղեկացվելուց, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահ կամ անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չընդունվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Կառավարությանը կամ Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը վերապահված՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա նույն մարմինն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում: Եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնում սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա Ազգային ժողովի կառավարող խմբակցությունն այդ պաշտոնում թեկնածու առաջադրում է մեկամսյա ժամկետում:

6. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պաշտոնում նշանակումը կատարվում է այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովի անդամ նշանակելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նույն մարմնի կողմից այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը պահպանվում է:

Գ Լ ՈՒ Խ 11

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 37. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) իրականացնում է վերահսկողություն տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ.

2) իրականացնում է տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, այդ թվում՝

ա. հաստատում է տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ, այլ փաստաթղթեր

բ. իրազեկում է հանրությանը տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի մասին.

գ. տալիս է պարզաբանումներ տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ.

դ. սույն օրենքով նախատեսված դեպքերում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց գործողության, գործարքի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ ընդունում է եզրակացություն .

ե. տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց տալիս է զգուշացում . ~~այն գործողությունների և (կամ) վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը կամ վնասել սպառողների շահերը.~~

3) հարուցում է տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթ և սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն.

3.1) ընդունում է միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում .

4) իրականացնում է վերահսկողություն՝ Հանձնաժողովի որոշման կատարման (պահպանման) նկատմամբ.

5) իրականացնում է ոլորտային ուսումնասիրություն.

6) սույն օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերադասին, իսկ վերադաս չունենալու դեպքում՝ պետական մարմին կամ դրա պաշտոնատար անձին .

7) դիմում է դատարան՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը խախտող ակտերը, գործողությունները և անգործությունը ոչ իրավաչափ կամ անվավեր ճանաչելու, դադարեցնելու կամ դրանցից ձեռնպահ մնալու պահանջով, եթե այդ վեճը հնարավոր չէ լուծել վարչական կարգով.

8) դիմում է դատարան՝ տնտեսավարող սուբյեկտի լուծարման, հարկադիր վերակազմակերպման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների միջև՝ սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքներն անվավեր ճանաչելու պահանջներով .

9) օրենքով սահմանված դեպքում դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով.

10) իրավաբանական անձի նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև Հանձնաժողովի որոշմամբ սահմանված և չկատարված պարտականությունների առկայության դեպքում դիմում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին հանձնաժողովի կողմից տվյալ իրավաբանական անձի լուծարումը կամ ռեդոմիցիլացումը արգելելու նպատակով.

11) ամփոփում է տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է ներկայացնում ~~մշակում~~ դրա կատարելագործման ուղղությամբ.

12) մասնակցում է տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը և իրավասու մարմիններին ներկայացնում օրենսդրական փոփոխությունների առաջարկներ.

13) հաստատում է իր աշխատակարգը.

14) սահմանում է տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման մեթոդաբանությունը և կարգը.

15) սահմանում է ապրանքային շուկաների որոշման կարգը.

~~16) սահմանում է անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը և հիմնավորումները Հանձնաժողով ներկայացնելու~~ .

17) սահմանում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը.

18) սահմանում է ստուգում, հսկիչ գնում, դիտանցում, արտաքին դիտում և մշտադիտարկում իրականացնելու ընթացքի տեսաձայնագրման և լուսանկարահանման կարգը .

19) սահմանում է ստուգումների, դիտանցումների և հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ձևը .

20) սահմանում է հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը.

21) սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը.

22) սահմանում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ պատասխանատվության միջոցի կիրառումից ազատման դիմումների ներկայացման և քննարկման կարգը.

23) սահմանում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառվող տուգանքի չափի նվազեցման կարգը.

24) սահմանում է Հանձնաժողովին փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման, վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հանձնաժողովի գործավարության այլ կանոններ.

25) սահմանում է գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը.

26) սահմանում է Հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը։

27) սահմանում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության մշտադիտարկման և դրա արդյունքների ամփոփման կարգը.

28) սահմանում է Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի շրջանակում ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը.

29) սահմանում է չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը.

30) սահմանում է պետական օժանդակության գնահատման կարգը.

31) սահմանում է պետական օժանդակության միասնական գրանցամատյանի ձևը և վարման կարգը.

32) որոշում է կայացնում հաշտության համաձայնություն կնքելու վերաբերյալ.

33) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հիմնավորված միջնորդության հիման վրա իրականացնում է Եվրասիական տնտեսական միության պայմանագրով սահմանված ընթացակարգային առանձին գործողություններ.

34) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման հարաբերություններում բանակցային ուժեղ դիրք ունեցող ձեռք բերողի և իրացնողի անհրաժեշտ հասույթի չափերը.

35) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Հանձնաժողովը սույն հոդվածի 1-ին մասի 13-31-րդ և 34-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Հոդված 42. Հանձնաժողովի որոշումների և եզրակացությունների ընդունման մասին իրազեկելը և ուժի մեջ մտնելը

1. Հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն ստորագրվելու օրվանից~~ց հետո~~՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում են հասցեատիրոջը: Հանձնաժողովի որոշումները, եզրակացությունները և Հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող հատվածների:

2. Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, բացառությամբ Հանձնաժողովի ընդունած վարչական ակտերի և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև այն դեպքի, երբ Հանձնաժողովը սահմանել է որոշման ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ:

3. Հանձնաժողովի եզրակացություններն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

Հոդված 43. Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների պարտականությունը Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում

1. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա պետական մարմինները, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն, բացառությամբ վիճակագրական, բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների:

2. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր,

նյութեր և այլ տեղեկատվություն, բացառությամբ բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների:

3. Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովը տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետների, ինչպես նաև սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի. ~~կամ~~ ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

4. Տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

5. Եթե որևէ տնտեսավարող սուբյեկտ սահմանված ժամկետում չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկատվություն, ապա Հանձնաժողովի կողմից իր տրամադրության տակ առկա փաստաթղթերի, նյութերի և այլ տեղեկատվության հիման վրա որոշում կայացվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը չի ազատվում փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունից կամ դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու համար սահմանված պատասխանատվությունից:

6. Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

7. Հանձնաժողովը կարող է ստանալ և լիազորություններն իրականացնելիս օգտագործել պետական էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 12
ՍՏՈՒԳՄԱՆ, ՀՍԿԻՉ ԳՆՄԱՆ, ԴԻՏԱՆՑՄԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԴԻՏՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 49. Հանձնաժողովի կողմից ստուգում իրականացնելը

1. Տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած տեղեկատվության արժանահավատության, տնտեսավարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության, Հանձնաժողովի կողմից ստուգումներն իրականացվում են Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով՝ սույն օրենքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:÷

2. Ստուգում իրականացնելու մասին Հանձնաժողովի նախագահի հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Հանձնաժողովն ստուգում իրականացնելիս իրավունք ունի ստանալու այլ պետական մարմինների աջակցությունը, ստուգմանը ներգրավելու այդ մարմինների աշխատողներին, ինչպես նաև ստուգման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով ներգրավելու համապատասխան մասնագետների, փորձագետների և թարգմանիչների:

4. Ստուգման արդյունքներով կազմվում է Հանձնաժողովի սահմանած ձևով արձանագրություն՝ երկու օրինակից: Ստուգման արձանագրությանը կարող են կցվել լուսանկարներ, փաստաթղթեր, էլեկտրոնային կրիչներ և (կամ) այլ նյութեր, որի վերաբերյալ արձանագրության մեջ կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունը ստորագրում են ստուգում կատարող անձը և տնտեսավարող սուբյեկտը, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը կամ տնտեսավարող սուբյեկտի այլ ներկայացուցիչ: Ստուգման արդյունքների վերաբերյալ առարկություն ունենալու դեպքում արձանագրությունն ստորագրող անձն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին:

ԳԼՈՒԽ 13
ՈԼՈՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 56. Ոլորտային ուսումնասիրության նպատակը

1. Հանձնաժողովն իրականացնում է ոլորտային ուսումնասիրություն որևէ ոլորտում կամ ապրանքային շուկայում կամ տարածքում մրցակցային իրավիճակը, տնտեսական

մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերը պարզելու, մրցակցային իրավիճակի, ինչպես նաև սպառողների շահերի վրա ազդեցություն ունեցող այլ պայմաններ բացահայտելու նպատակով:

Հոդված 57. Ոլորտային ուսումնասիրություն իրականացնելու և ամփոփելու կարգը

1. Ոլորտային ուսումնասիրությունն իրականացվում է Հանձնաժողովի ոլորտային ուսումնասիրություն իրականացնելու մասին որոշմամբ, որում առնվազն սահմանվում են ուսումնասիրվող ոլորտը կամ ոլորտները և ուսումնասիրություն իրականացնելու ժամկետը:

2. Ոլորտային ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, հատկորոշում է ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, որոշում է ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը, ապրանքային շուկայի ծավալները, տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, ուսումնասիրում է համապատասխան իրավական ակտերը, պարզում է ապրանքային շուկա մուտքի խոչընդոտների առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրում է ոլորտին կամ ապրանքային շուկային առնչվող այլ հանգամանքներ, որոնք կարող են ընդհանուր մրցակցային իրավիճակի, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերի, ինչպես նաև սպառողների շահերի վրա ազդեցություն ունեցող այլ պայմանների վերաբերյալ եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ:

3. Ոլորտային ուսումնասիրության արդյունքները հաստատվում են Հանձնաժողովի որոշմամբ:

Գ Լ ՈՒ Խ 1 4

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Հոդված 58. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացության տրամադրման հիմքերը

1. Մինչև համապատասխան գործողության կատարումը, գործարքի կնքումը կամ իրավական ակտի (բացառությամբ նորմատիվ իրավական ակտի) ընդունումը դրա՝ տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերը վնասելու, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով Հանձնաժողով դիմելու իրավունք ունեն պետական մարմինները, դրանց պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտները:

2. Մինչև նորմատիվ իրավական ակտի ընդունումը դրա՝ տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերը վնասելու, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով Հանձնաժողով դիմելու իրավունք ունի այն ընդունելու իրավասություն ունեցող պետական մարմինը կամ դրա պաշտոնատար անձը:

3. Նորմատիվ իրավական ակտի նախագծի՝ տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն Հանձնաժողովը կարող է ընդունել սեփական նախաձեռնությամբ:

Հոդված 59. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու դիմումին ներկայացվող պահանջները

1. Գործողության, գործարքի կամ իրավական ակտի (բացառությամբ նորմատիվ իրավական ակտի)՝ տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու վերաբերյալ դիմումում նշվում են՝

1) Հանձնաժողովի անվանումը,

2) դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հաշվառման հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը, գտնվելու վայրի հասցեն, նրա անունից դիմում ներկայացրած անձի անունը, ազգանունը և պաշտոնը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից),

3) եզրակացությամբ պարզաբանման ենթակա հարցի մանրամասն նկարագրությունը՝ նշելով տնտեսավարող սուբյեկտների տվյալները, նրանց միջև կապը կամ հնարավոր կապը, ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վերաբերյալ դիմումատուի ունեցած տվյալները, ինչպես նաև եզրակացության համար էական նշանակություն ունեցող այլ տեղեկություններ,

4) եզրակացությամբ պարզաբանման ենթակա հարցերը և դիմումատուի դիրքորոշումն այդ հարցերի վերաբերյալ, դիմումը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը,

5) դիմումին կցվող նյութերի ցանկը,

6) դիմում ներկայացրած անձի ստորագրությունը:

2. Առկայության դեպքում դիմումին կցվում են պայմանագրերի, համաձայնագրերի, ակտերի կամ այլ փաստաթղթերի նախագծերը: Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի լիազորությունները հավաստող փաստաթուղթ:

3. Եզրակացություն ստանալու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել Հանձնաժողովի սահմանած ձևով:

4. Ներկայացված դիմումը սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում չի քննարկվում, որի մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ դիմում ներկայացրած անձը տեղեկացվում է երեք օրվա ընթացքում: Գրությամբ նշվում են դիմումում թույլ տրված բոլոր առերևույթ սխալները:

Հոդված 60. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու կարգը

1. Հանձնաժողովը օրենքով սահմանված պահանջներին համապատասխան դիմում ստանալու դեպքում սկսում է եզրակացության ընդունման ընթացակարգ տնտեսական մրցակցությանը և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ:

2. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տրամադրվում է դիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

3. Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկամսյա ժամկետով:

4. Նախքան եզրակացության ընդունումը Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարող է դիմել դիմումատուին, պետական մարմիններ և այլ սուբյեկտներին՝ եզրակացության ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու պահանջով, ինչպես նաև ստանալ քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, ինչպես նաև դիմումատուին կամ այլ անձանց հրավիրել Հանձնաժողովի նիստի կամ քննարկման:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվության բացակայության դեպքում Հանձնաժողովը եզրակացությունն ընդունում է այդ տեղեկատվության բացակայությամբ՝ նշելով դրա նշանակությունը և ազդեցությունը քննարկվող հարցի վերաբերյալ:

Հոդված 61. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացությունը

1. Տնտեսական մրցակցությանն և սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը, բացառությամբ նորմատիվ իրավական ակտի նախագծի կապակցությամբ ընդունվելու դեպքի, պարտադիր է, և դրանով չառաջնորդվելը կարող է հիմք լինել տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար:

2. Նորմատիվ իրավական ակտի նախագծի՝ տնտեսական մրցակցությանն **և** սպառողների շահերին առնչվող հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ:

Հոդված 69. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացման գնահատումը

1. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը գնահատման արդյունքում թույլատրվում կամ արգելվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա:

2. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացման գնահատման վարույթի մասնակիցների կողմից հայտարարագրում կամ վարույթի ընթացքում կեղծ, ոչ հավաստի, ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն ներկայացնելու կամ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում Հանձնաժողովը կայացնում է դիմումն անհետևանք թողնելու մասին որոշում:

3. Հանձնաժողովի կողմից համակենտրոնացման դիմումը անհետևանք թողնելու մասին որոշում կարող է կայացվել վարույթի ցանկացած փուլում:

Հոդված 70. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումն արգելելու հիմքերը

1. Հանձնաժողովն արգելում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը, եթե՝

1) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով կանխվելու, սահմանափակվելու, արգելվելու կամ այլ կերպ վատթարանալու է տնտեսական մրցակցությունը համապատասխան ապրանքային շուկայում, կամ

2) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացումը հանգեցնելու է գերիշխող դիրքի առաջացմանը կամ ամրապնդմանը, կամ

3) Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ համակենտրոնացման հետևանքով վնասվելու են սպառողների շահերը:~~, կամ~~

~~4) համակենտրոնացման մասնակիցը չի ներկայացնում համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող տեղեկատվություն, և այդ տեղեկատվությունն այլ աղբյուրներից ստանալն անհնար է, կամ~~

~~5) համակենտրոնացման մասնակիցը ներկայացրել է համակենտրոնացման ազդեցությունը համապատասխան ապրանքային շուկայում գնահատելու համար Հանձնաժողովի կողմից էական դիտարկվող կեղծ տեղեկատվություն, ինչը բացասաբար է անդրադարձել Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրության ընթացքի և արդյունքների վրա:~~

Հոդված 72. Համակենտրոնացման թույլատրումը

1. Համակենտրոնացումն արգելելու հիմքեր առկա չլինելու դեպքում Հանձնաժողովը թույլատրում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը:

2. Համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը գործում է մեկ տարի ժամկետով, եթե առավել կարճ ժամկետ սահմանված չէ Հանձնաժողովի որոշմամբ:

3. Սույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի ~~2-5-րդ~~2-3-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը թույլ է տալիս այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտը հիմնավորում է, որ տվյալ համակենտրոնացման հետևանքով ապրանքային շուկայում կապահովվեն բարենպաստ մրցակցային պայմաններ, և չեն վնասվի սպառողների շահերը:

4. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը թույլատրելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը կարող է պարունակել համակենտրոնացման մասնակցի համար պարտադիր կատարման ենթակա պայմաններ և պարտավորություններ, որոնք գործում են անժամկետ, եթե այլ ժամկետ սահմանված չէ Հանձնաժողովի որոշմամբ:

5. Համակենտրոնացման մասնակիցները պարտավոր են համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման մեջ սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողով ներկայացնել պարտադիր կատարման ենթակա պայմանների և պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

6. Համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշմամբ նախատեսված պայմանները և պարտավորությունները խախտելու դեպքում Հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը:

Հոդված 73. Չհայտարարագրված և արգելված համակենտրոնացումը

1. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է չհայտարարագրված, եթե այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման~~, և առկա չէ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերից որևէ մեկը~~:

2. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է արգելված, եթե՝

1) այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման, և հետագայում Հանձնաժողովն ամրագրել է, որ այն ենթակա է արգելման.

2) Հանձնաժողովի կողմից սույն օրենքի 72-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որոշման դեպքում համակենտրոնացման մասնակցի (մասնակիցների) կողմից պարտադիր կատարման ենթակա պայմանների և պարտավորությունների խախտման հիմքով Հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչել համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը:

3. Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը Հանձնաժողովի որոշմամբ արգելվելու դեպքում, եթե այն դրվել է գործողության մեջ, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում Հանձնաժողովը որոշում է կայացնում հետևյալ հանձնարարությունները տալու մասին, եթե դրանց շնորհիվ համապատասխան ապրանքային շուկայում, համաձայն Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքների, կվերականգնվեն մրցակցային բարենպաստ պայմանները.

1) համակենտրոնացման արդյունքում միացած իրավաբանական անձին առանձնացնելու.

2) համակենտրոնացման արդյունքում միաձուլված իրավաբանական անձանց բաժանելու.

3) համակենտրոնացման արդյունքում նոր հիմնադրված իրավաբանական անձին լուծարելու.

4) համակենտրոնացման համար հիմք հանդիսացած և դեռևս ամբողջությամբ չկատարված պայմանագիրը լուծելու և մինչև պայմանագրի լուծման պահը պայմանագրի կողմերից յուրաքանչյուրի՝ գործարքով ամբողջ ստացածը մյուս կողմին վերադարձնելու, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ դրա արժեքը դրամով հատուցելու.

5) համակենտրոնացման համար հիմք հանդիսացած և ամբողջությամբ կատարված պայմանագրի կողմերից յուրաքանչյուրի՝ գործարքով ամբողջ ստացածը մյուս կողմին վերադարձնելու, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ դրա արժեքը դրամով հատուցելու:

4. Հանձնաժողովի սահմանած ժամկետում սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված գործողությունները չկատարելու դեպքում համակենտրոնացված տնտեսավարող սուբյեկտը ենթակա է դատական կարգով հարկադիր վերակազմակերպման:

5. Հանձնաժողովի սահմանած ժամկետում սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում նշված գործողությունները չկատարելու դեպքում նոր հիմնադրված իրավաբանական անձը ենթակա է դատական կարգով հարկադիր լուծարման:

Հոդված 77. Ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաղորդումը ներկայացվում է գրավոր:

2. Հաղորդման մեջ պետք է նշվեն Հանձնաժողովի անվանումը, հաղորդում ներկայացնող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հաշվառման հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, պետական գրանցման կամ հաշվառման համարը և գտնվելու վայրի հասցեն, նրա անունից հաղորդում ներկայացրած անձի անունը, ազգանունը և պաշտոնը, ծանուցման հասցեն

(եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), սույն օրենքի առերևույթ խախտման և այն կատարողի մասին տեղեկությունները, հաղորդում ներկայացնող անձի պահանջը, հաղորդումը ներկայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև հաղորդմանը կցվող փաստաթղթերի ցանկը:

3. Հաղորդումն ստորագրվում է այն ներկայացնող անձի կողմից: Եթե հաղորդումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի լիազորությունները հավաստող փաստաթուղթ:

4. Հաղորդմանը կարող են կցվել հաղորդման մեջ նկարագրված փաստերի առկայությունը հիմնավորող նյութեր, այդ թվում՝ լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ և այլն:

5. Հաղորդում ներկայացնող անձի ցանկությամբ այն ներկայացնողի տվյալները գաղտնագրվում են: Գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

6. Հաղորդումը կարող է ներկայացվել Հանձնաժողովի սահմանած ձևով:

7. Հաղորդումը չի քննարկվում, եթե այն պարունակում է զրպարտիչ կամ վիրավորական արտահայտություններ:

Հոդված 79. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկումը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթները Հանձնաժողովում քննարկվում են մեկամսյա ժամկետում:

2. Մինչև տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկման արդյունքում որոշման ընդունումը Հանձնաժողովը սույն օրենքի առերևույթ խախտման փաստի հավաստիությունն ստուգելու նպատակով կարող է կատարել դիտանցում, հսկիչ գնում, մշտադիտարկում, արտաքին դիտում, պահանջել և ստանալ տեղեկատվություն:

2.1. Տնտեսավարող սուբյեկտների կողմից վարույթի հարուցման առիթների քննարկման շրջանակում Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու պարտականության խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է հաստատված համարել տվյալ տնտեսավարող սուբյեկտի վարքագծում կամ գործողություններում իրավախախտման հատկանիշների առերևույթ առկայության փաստը և հարուցել վարույթ:

3. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է որոշում՝

1) տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին.

2) տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված մի քանի որոշում կայացնելու հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը դրանք կայացնում է առանձին՝ դրանցից յուրաքանչյուրի մասով կատարելով սույն գլխով նախատեսված գործողությունները:

5. Ներկայացված հաղորդումները սույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում չեն քննարկվում, որի մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ հաղորդում ներկայացրած անձինք տեղեկացվում են:

6. Սույն օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասով և 82-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում հաղորդումը Հանձնաժողովի նախագահի գրությամբ վերահասցեագրվում կամ վերադարձվում է այն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում:

Հոդված 80. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման մերժումը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե՝

1) բացակայում է խախտման դեպքը.

2) առկա է պատասխանատվությունից ազատելու հիմք.

3) առկա է նույն արարքի մասին և նույն իրավական և փաստական հիմքերով Հանձնաժողովի կողմից հարուցված կամ կարճված վարույթ.~~նույն արարքի վերաբերյալ առկա է Հանձնաժողովի կողմից իրականացվող կամ կարճված վարույթ.~~

~~4~~) առկա է նույն արարքի մասին և նույն իրավական և փաստական հիմքերով նույն անձի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու կամ պատասխանատվության միջոցի կիրառումից ազատելու մասին Հանձնաժողովի որոշում.~~առկա է նույն արարքի համար նույն անձի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու կամ պատասխանատվության միջոցի կիրառումից ազատելու մասին Հանձնաժողովի որոշում.~~

5) առկա է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտ.

6) ենթադրյալ իրավախախտում կատարած ֆիզիկական անձը մահացել է.

7) ենթադրյալ իրավախախտում կատարած իրավաբանական անձը լուծարվել է.

8) ուժը կորցրել է տվյալ խախտման համար պատասխանատվություն սահմանող օրենքի նորմը:

2. Վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը ~~ընդունման~~ ստորագրվելու օրվանից եռօրյա ժամկետում ուղարկվում է հաղորդում ներկայացրած անձին:

3. Վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում այն կարող է բողոքարկել հաղորդում ներկայացրած անձը:

Հոդված 82.1. Զգուշացում տալը

1. Տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության կամ սպառողների շահերի վնասմանը հանգեցնող վարքագծի, գործողության կամ անգործության առերևույթ հատկանիշների կամ դրա վտանգի առկայության դեպքում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց կարող է տրվել զգուշացում:

2. Տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության կամ սպառողների շահերի վնասմանը հանգեցնող վարքագծի, գործողության կամ անգործության առերևույթ հատկանիշների կամ դրա վտանգի առկայության դեպքում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց զգուշացում տալու ընթացակարգի մանրամասները սահմանվում են Հանձնաժողովի աշխատակարգով:

3. Տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից զգուշացմամբ նկարագրված տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության կամ սպառողների շահերի վնասմանը հանգեցնող վարքագծի, գործողության կամ անգործության առերևույթ հատկանիշները Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում կարող է հարուցվել վարույթ:

Հոդված 83. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը

1. Վարույթի հարուցումը մերժելու, հաղորդումը վերահասցեագրելու կամ վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացնում տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին, որում նշվում են՝

1) վարույթ իրականացնող մարմնի անվանումը,

2) առերևույթ իրավախախտման նկարագրությունը,

3) սույն օրենքի այն դրույթը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ խախտման համար,

4) վարույթով պատասխանողի անունը, ազգանունը (անվանումը),

5) որոշումն ստորագրելու ժամանակը (տարեթիվը, ամիսը, օրը),

6) որոշումն ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը:

2. Վարույթ հարուցելու մասին որոշումը կարող է պարունակել գործի քննության ժամանակի և վայրի, ինչպես նաև տեղեկություններ տրամադրելու պահանջի մասին դրույթներ:

3. Վարույթ հարուցելու մասին ~~որոշումն ընդունման~~ որոշումը ստորագրվելու օրվանից եռօրյա ժամկետում ուղարկվում է վարույթով պատասխանողին և հաղորդում ներկայացրած անձին:

Հոդված 83 .1. Միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում

1. Հակամրցակցային համաձայնության կնքման և գերիշխող դիրքի չարաշահման առերևույթ հատկանիշներ պարունակող գործողության կամ վարքագծի հետևանքով հնարավոր անդառնալի կամ ծանր հետևանքները կանխելու նպատակով Հանձնաժողովը կարող է ընդունել միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, այդ թվում՝

1) դադարեցնել իրավախախտման առերևույթ հատկանիշներ պարունակող վարքագիծը մինչև վարույթով վերջնական որոշման կայացումը՝ վերականգնելով մինչև իրավախախտման առերևույթ հատկանիշներ պարունակող վարքագիծը եղած դրությունը կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված այլ ձևերով.

2) կասեցնել գնման արդյունքում պայմանագրի կնքման գործընթացը կամ դրա գործողությունը:

2. Միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կարող է ընդունվել Հանձնաժողովի կողմից իրավախախտման վերաբերյալ հարուցված վարույթի ցանկացած փուլում և գործում է մինչև վարույթը եզրափակող ակտի ուժի մեջ մտնելը:

3. Հանձնաժողովը նույն վարույթի շրջանակում կարող է կիրառել մեկից ավելի միջանկյալ միջոց:

4. Միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկելու վերաբերյալ գրությունը Հանձնաժողովի նախագահի գրության հիման վրա վերադարձվում է, եթե՝

1) վերացել է միջանկյալ միջոց կիրառելու անհրաժեշտությունը.

2) Հանձնաժողովի որոշումը ճանաչվել է անվավեր կամ ուժը կորցրած:

6. Միջանկյալ միջոց կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել: Որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

Հոդված 88. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ արագացված վարույթը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ սույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի երկարաձգման դեպքում երկարաձգված ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով: Այն դեպքում, երբ իրավախախտման հետևանքները վերացնելն անհնար է, իրավախախտման հետևանքները վերացված լինելու պայմանը իրավախախտման փաստի ընդունման դեպքում համարվում է առկա:

2. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

3. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը Հանձնաժողովը բավարարում կամ մերժում է միջնորդությունն ստանալու օրվանից տասն օրվա ընթացքում:

4. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարվում է, եթե այն համապատասխանում է սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին: Նշված պահանջները չբավարարելու դեպքում միջնորդությունը մերժվում է:

5. Արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

6. Հանձնաժողովը վարույթի արդյունքում որոշումը կայացնում է արագացված վարույթ կիրառելու մասին որոշման ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում՝ բացառությամբ չհայտարարագրված համակենտրոնացման առնչությամբ հարուցված վարույթների, որոնց դեպքում կիրառվում է վարույթի ժամկետների ընդհանուր կանոնները: առանց վարույթի մասնակիցներին լսման նպատակով նիստ հրավիրելու:

7. Արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Հոդված 90. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունվող որոշումները

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը.

1) պատասխանատվության միջոց կիրառելու մասին.

2) պատասխանատվության միջոցի կիրառումից ազատելու մասին.

3) իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին:

2. Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում ընդունելու դեպքում Հանձնաժողովը կարող է վարույթով պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով նույն կամ մինչև այդ որոշման անբողոքարկելի դառնալն ընդունված առանձին պատճառաբանված որոշմամբ դնել արգելանք, եթե նման որոշում չկայացնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել Հանձնաժողովի՝ պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման կատարումը:

3. Պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշումն արգելանք դնելու մասով կամ առանձին ընդունված արգելանք դնելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է անհապաղ կատարման Հարկադիր կատարումն

ապահովող ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

~~4. Արգելանք դնելու մասին որոշումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացվում Հանձնաժողովի նախագահի գրությամբ, որում նշվում են՝~~

~~1) Հանձնաժողովի անվանումը,~~

~~2) գրությունը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը,~~

~~3) արգելանք դնելու մասին որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը,~~

~~4) արգելանք դնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու տարին, ամիսը և ամսաթիվը,~~

~~5) արգելադրման ենթակա գումարի չափը,~~

~~6) պարտապանի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց հաշվառման (գտնվելու վայրի) և առկայության դեպքում ծանուցման հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:~~

5. Արգելանք դնելու մասին որոշումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկելու վերաբերյալ գրությունը Հանձնաժողովի նախագահի գրությամբ հետ է պահանջվում, եթե՝

1) վարույթով պատասխանողի վերաբերյալ ընդունված պատասխանատվության միջոց կիրառելու մասին անբողոքարկելի որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն.

2) վարույթով պատասխանողի՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքը վճարելու պարտավորությունը դադարել է.

3) Հանձնաժողովի որոշումը ճանաչվել է անվավեր կամ ուժը կորցրած:

6. Արգելանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել: Որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

Գ Լ ՈՒ Խ 17.1

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 91.1. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթի իրականացման կարգը

1. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթը իրականացվում է սույն օրենքով տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացման կարգով՝ սույն գլխով սահմանված հատուկ կանոնների պահպանմամբ:

Հոդված 91.2. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթի մասնակիցները

1. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների վերաբերյալ վարույթի մասնակիցներն են՝

1) վարույթով պատասխանողը.

2) իրավասու մարմինները:

Հոդված 91.3. Գրավոր ծանուցումը

1. Ապրանքի գնի ներկայացման՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման հատկանիշների առերևույթ առկայության դեպքում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը տնտեսավարող սուբյեկտին ուղարկում է գրավոր ծանուցում՝ առաջարկելով վերացնել խախտման հատկանիշները և վճարել հիսուն հազար դրամ:

2. Ծանուցման ուղարկման առիթներն են.

1) ապրանքի գնի ներկայացման «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումները.

2) ապրանքի գնի ներկայացման «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման մասին պետական մարմինների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ դրանց պաշտոնատար անձանց հաղորդումները.

3) ապրանքի գնի ներկայացման «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման փաստի հայտնաբերումը.

4) ապրանքի գնի ներկայացման «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակած տեղեկությունները.

5) ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստացված ցանկացած այլ տեղեկություն, որը թույլ է տալիս ողջամտորեն ենթադրել, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից թույլ է տրվել «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված կանոնների խախտում:

3. Տնտեսավարող սուբյեկտի կողմից տասնհինգօրյա ժամկետում գրավոր ծանուցմամբ նշված գումարը չվճարելու դեպքում Հանձնաժողովը կարող է սպառողների շահերի պաշտպանության բնագավառում իրավախախտման հատկանիշների առերևույթ առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հոդված 91.4. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկումը

1. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների քննարկման արդյունքում Հանձնաժողովը կարող է ընդունել վարույթ հարուցելու մասին որոշում

2. Հանձնաժողովը վարույթի հարուցման առիթները քննարկելիս կարող է հաշվի առնել վարքագծի, գործողության և անգործության ազդեցությունը, վարույթ հարուցելու դեպքում այն եզրափակող Հանձնաժողովի որոշման ազդեցությունը և Հանձնաժողովի ռեսուրսները:

3. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման առիթների գնահատման կարգը սահմանվում է Հանձնաժողովի աշխատակարգով:

ԳԼՈՒԽ 18

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 92. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները

1. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին,

պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Հոդված 93. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար նշանակվող տուգանքների չափերը

1. Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

2. Տնտեսավարող սուբյեկտի կողմից տնտեսական գործունեության արգելված համակարգման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

3. Գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

4. Բանակցային ուժեղ դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտում թույլ տված տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

5. Համակենտրոնացումը չհայտարարագրելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

6. Արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

7. Անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

7.1. Սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությամբ սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

8. ~~Տնտեսավարող սուբյեկտի կողմից~~ Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ~~կամ~~ ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողովին ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

9. Վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ~~կամ~~ ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողովին ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

10. Հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը կամ Հանձնաժողովի անդամի կամ աշխատակցի՝ օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

11. Վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը կամ Հանձնաժողովի անդամի կամ աշխատակցի՝ օրենսդրությամբ վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

12. Տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի որոշմամբ ամրագրված խախտումները սահմանված ժամկետում չդադարեցվելու կամ չշտկվելու կամ որոշմամբ նախատեսված պայմանները, պարտավորությունները կամ հանձնարարությունները սահմանված ժամկետում չկատարվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

13. Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է

իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

14. Անձանց խմբի կողմից օրենքի խախտման համար սույն հոդվածով նախատեսված տուգանքը նշանակվում է այն տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոնք իրենց գործողությամբ կամ վարքագծով մասնակցություն են ունեցել իրավախախտմանը կամ իրավախախտման հետևանքով ստացել են կամ կարող էին ստանալ շահույթ կամ առավելություն կամ հայտնվել են առավել բարենպաստ պայմաններում, և տուգանքը հաշվարկվում է այդ տնտեսավարող սուբյեկտների հասույթների ընդհանուր գումարից:

Հոդված 94. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումը

1. Պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորությունը~~ աստիճանը~~, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տուգանքի չափը նվազեցնելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը կամ տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

2. Տնտեսավարող սուբյեկտի աշխատողի վարքագիծն աշխատանքային գործունեության ընթացքում դիտարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտի վարքագիծ:

3. Հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, այլ), ինչպես նաև պատասխանատվությունից ազատելու կամ տուգանքի չափը նվազեցնելու հիմքերը:

4. Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 95. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտումների համար պատասխանատվությունից ազատելու ընդհանուր հիմքերը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման համար տնտեսավարող սուբյեկտներն ու պետական մարմիններն ազատվում են պատասխանատվությունից, եթե վարույթ հարուցելու օրվա դրությամբ իրավախախտման կատարման օրվանից անցել է հինգ տարի:

2. Հանձնաժողովը կարող է ~~անձին~~ տնտեսավարող սուբյեկտներին և պետական մարմիններին ազատել պատասխանատվությունից, եթե ~~նրա~~ նրանց վարքագիծը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ որևէ անձի կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել:

Հոդված 98. Տնտեսական մրցակցության բնագավառում և սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման հետևանքով պատճառված վնասի հատուցումը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում **և սպառողների շահերի դեմ ուղղված** իրավախախտման հետևանքով տնտեսավարող սուբյեկտներին կամ անձանց վնաս պատճառվելու դեպքում դրանք ենթակա են օրենսդրությամբ սահմանված կարգով խախտում կատարած տնտեսավարող սուբյեկտի, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից հատուցման: